

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Մարզի խորհրդի նիստը վարում էր ՀՀ Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանը

ք.Հրազդան

18.07.2014թ. ժամը 10.⁰⁰

ՄԱՄՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

-Մարզի խորհրդի անդամ 67 համայնքների ղեկավարներից 60-ը /բացակայում էին Նոր Հաճն, Ջրառատ, Ֆանտան, Նոր Գյուղ, Գետամեջ, Մրգաշեն, Քանաքեռավան համայնքների ղեկավարները/

- Ա.Ղազարյան, Կ. Մարգարյան - ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալներ

-Կ. Պապոյան - ՀՀ Կոտայքի մարզպետի խորհրդական

-Մ.Գարեգինյան -ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար

-Մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ

Մարզի խորհրդի նիստին մասնակցում էին նաև՝

-Ս. Մնացականյան - ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ

-Գ. Անանյան - ՀՀ պետական վիճակագրական խորհրդի անդամ

-Վ. Դավթյան - ՀՀ ազգային վիճակագրական ծառայության մարզային վարչության պետ

-Հ. Օհանյան – ՀՀ տարածքային կառավարման նախարարության վարչական վերահսկողության բաժնի պետ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

1. Կոտայքի մարզում 2014 թվականի հուլիսի 1-ից գյուղատնտեսական համատարած հաշվառում անցկացնելու մասին

1.1 Գյուղատնտեսական համատարած հաշվառման նպատակը և կարևորությունը

1.2 Գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստական աշխատանքների ընթացքը

1.3 Մարզային հանձնաժողովների և համայնքապետների կողմից ցուցաբերվելիք օժանդակության մասին

1.4 Այլ հարցեր

/զեկուցող՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ՝ Ս. Մնացականյան/

2. Մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ընթացքը 2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ

/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լ. Նահապետյան/

3. Մարզի համայնքներում 2014 թվականի 1-ին կիսամյակում իրականացված վարչական հսկողության գործընթացի մասին

/գեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ վարչության պետ Ս. Հակոբյան/

4. Ընթացիկ հարցեր

- 4.1 Արցախի ազգային վիճակախաղի 2-րդ խաղարկությանն աջակցելու մասին
- 4.2 Մարզի գորահավաքային նախապատրաստական աշխատանքների մասին
- 4.3 Մարզի համայնքների աշխատակազմերի կադրերի գործի վարման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների մասին

/գեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ վարչության պետ Ս. Հակոբյան/

ԼՍԵՑԻՆ՝

1. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ Ս. Մնացականյանի ելույթը Կոտայքի մարզում 2014 թվականի հուլիսի 1-ից գյուղատնտեսական համատարած հաշվառում անցկացնելու մասին: Ս. Մնացականյանը ներկայացրեց հաշվառման նպատակը և կարևորությունը, կառուցվածքը, նախապատրաստական աշխատանքների ընթացքը, մեթոդները, սպասվելիք արդյունքները:

Գյուղատնտեսական համատարած հաշվառման տվյալներն օգտագործվելու են բացառապես վիճակագրական նպատակներով, լիազորված մարմինը պարտավոր է ապահովել սկզբնական նյութերի գաղտնիությունը: Հաշվառման նպատակը գյուղատնտեսության ոլորտի ընթացիկ վիճակագրության բարելավումը և վիճակագրական տվյալների ամբողջական համակարգի ձևավորումն է:

Անդրադառնալով գյուղատնտեսական համատարած հաշվառման գործընթացին մարզային հանձնաժողովների և համայնքապետերի կողմից ցուցաբերվելիք օժանդակությանը՝ Ս. Մնացականյանը կարևորեց բնակչության իրազեկումը, հաշվարարների թեկնածուների ներկայացումը, գյուղապետարաններում, դպրոցներում, մանկապարտեզներում տարածքների տրամադրումը, ինչպես նաև փողոցների, թաղամասերի անվանատախտակների և շենքերի, շինությունների, բնակարանների համարանիշերի առկայությունը:

2. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լ.Նահապետյանի գեկուցումը 2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի մասին:

Զեկուցումն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

